USAID FROM THE AMERICAN PEOPLE

PH international ADVANCING SOCIETIES, CONNECTING PEOPLE

ICHD Մարդկային զարգացման միջազգային կենտրոն International Center for Human Development

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Երևան, 2023 թ.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հեղինակ՝ Աննա Գևորգյան

Սույն հետազոտությունը ստեղծվել է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի պատվերով «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի շրջանակում, որը ֆինանսավորվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից:

Ծրագիրը իրականացվում է «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության և իր ենթադրամաշնորհառուների կողմից:

Ծրագիրը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ ՄԶԳ միջոցով: Այստեղ ներկայացված բովանդակությունը ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլի ենթադրամաշնորհառու Մարդկային զարգացման միջազգային կենտրոնինն է, և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

Պայմանագիր N 72011122CA00001

© Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, 2023

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Մենք ցանկանում ենք մեր երախտագիտությունը հայտնել բոլորին, ովքեր աջակցել են ՄԶՄԿ հետազոտական թիմին Հայաստանում որոշումների կայացման գործընթացում երիտասարդների ներգրավվածության համապարփակ գնահատման ընթացքում (ԵՆՈԿԳՀԳ): Հատուկ շնորհակալություն Մանե Թորոսյանին, ով իր ներդրումն է ունեցել այս զեկույցի մի քանի բաժիններում և կառուցողական կարծիք է ներկայացրել այս զեկույցի նախագծերի վերաբերյալ:

Ցանկանում ենք անկեղծորեն շնորհակալություն հայտնել տարբեր տարիքի բոլոր երիտասարդներին, ովքեր ֆոկուս խմբերի քննարկումների և հարցազրույցների ժամանակ ազատ և անկաշկանդ կիսվել են որոշումների կայացման մեջ երիտասարդների ներգրավվածության վերաբերյալ իրենց տեսակետներով:

Ցանկանում ենք նաև մեր խորին երախտագիտությունը հայտնել պետական գերատեսչությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, միջազգային զարգացման գործընկեր կառույցների ներկայացուցիչներին և անկախ փորձագետներին, ովքեր պատրաստակամորեն ժամանակ հատկացրեցին մեզ, կիսվելով Հայաստանում երիտասարդական քաղաքականության և պրակտիկայի վերաբերյալ իրենց անգնահատելի պատկերացումներով՝ թիրախավորելով երիտասարդների ներգրավվածությունը որոշումների կայացման մեջ:

Ցանկանում ենք առանձնահատուկ շնորհակալություն հայտնել Արմավիրում գործող «Արմավիրի զարգացման կենտրոնի» և Գորիսի «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ի փորձագետներին, ովքեր հնարավոր դարձրեցին Արմավիրի և Սյունիքի մարզերի նախնական տվյալների հավաքագրումը:

Մենք նաև ցանկանում ենք շնորհակալություն հայտնել ԱՄՆ ՄԶԳ-ին ԵՆՈԿԳՀԳ-ն հնարավոր դարձնելու համար:

ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

Որոշումների կայացման գործընթացում երիտասարդների ներգրավվածության համապարփակ գնահատումը (ՈԿԳԵՆՀԳ) պատվիրվել է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի (ՄԶՄԿ) կողմից 2022 թվականի հուլիսին՝ նպատակ ունենալով բացահայտել որոշումների կայացման մեջ հայ երիտասարդների ներգրավվածության ուժեղ կողմերը, բացերը, մարտահրավերները և հնարավորությունները:

Այս ուսումնասիրությունը հաշվի է առել 2019 թվականին Making Cents-ի կողմից իրականացված Հայաստանի երիտասարդական իրավիճակի վերլուծության արդյունքները (Making Cents, 2019թ.): 2019 թվականի ուսումնասիրությունը նշանակալի տվյալներ է հավաքել Հայաստանում երիտասարդության իրավիճակի վերաբերյալ, մասնավորապես՝ 2018 թվականի թավշյա հեղափոխությունից հետո:

Այնուամենայնիվ, թարմացված տվյալների անհրաժեշտությունը հրամայական էր՝ վերջին հինգ տարիներին Հայաստանի վրա էականորեն ազդած հասարակական-քաղաքական իրադարձությունների համատեքստում, մասնավորապես՝ 2018 թվականի թավշյա հեղափոխությունը, 2020 թվականի սկզբին Քովիդ-19 համաճարակը, 2020 թվականի աշնանը Լեռնային Ղարաբաղում զինված հակամարտության սրացումը և դրան հաջորդած ռազմական բախումները Ադրբեջանի հետ սահմանին, որոնք հանգեցրել են անվտանգության զգալի սպառնալիքների:

ՈԿԳԵՆՀԳ-ն նպատակ ուներ ուսումնասիրել, թե ինչպես և որքանով են նշված իրադարձություններն ազդել Հայաստանում որոշումների կայացման գործընթացներում ներգրավվելու երիտասարդության պատրաստակամության և ձգտումների վրա, ինչպես են դրսևորվում նրանց գործողություններն ու համոզմունքները այս գործընթացներում և ինչպես են երիտասարդները որոշում ներգրավվել դրանցում:

Ուսումնասիրությունը տրամադրում է քաղաքականության մշակման առաջարկություններ հիմնական պետական և տեղական շահագրգիռ կողմերին՝ երիտասարդներին որոշումների կայացման գործընթացում արդյունավետ ներգրավելու համար:

Ուսումնասիրության ամբողջական զեկույցը հասանելի է միայն անգլերենով Քաղաքացիական կրթություն և մասնակցություն ծրագրի ArmCivics.am կայքում:

ՈԿԳԵՆՀԳ-ի գնահատման համար, որպես վերլուծական հիմք, օգտագործվել է ԱՄՆ ՄԶԳ-ի Երիտասարդների դրական զարգացման (ԵԴԶ)[1] հայեցակարգը: ԵԴԶ-ի հայեցակարգը բաղկացած է **ստորև նշված չորս տիրույթներից**, որոնք, միասին վերցրած, համարվում են առողջ, արդյունավետ և ներգրավված երիտասարդության չափանիշ:

1 Երիտասարդության դրական զարգացումը փիլիսոփայություն և ծրագրային մոտեցում է, որը ներգրավում է երիտասարդներին իրենց ընտանիքների, համայնքների և/կամ կառավարությունների հետ միասին, որպեսզի երիտասարդները h02նարավորություն ունենան օգտագործելու իրենց ողջ ներուժը: ԵԴԶ մոտեցումները զարգացնում են հմտություններ, ակտիվներ և կարողություններ, խթանում են առողջ հարաբերությունները, ամրապնդում են շրջակա միջավայրը և փոխակերպում համակարգերը: https://www.youthpower.org/positive-youth-development-pyd-framework

ԵԴԶ ուղենիշներով մշակված քաղաքականություններն ու ծրագրերն աշխատում են երիտասարդների հետ՝ բարելավելու նրանց.

- **Ներքին և արտաքին ռեսուրսներ.** երիտասարդներն ունեն անհրաժեշտ ռեսուրսներ, հմտություններ և կարողություններ՝ ցանկալի արդյունքների հասնելու համար:

- **Գործունություն.** երիտասարդներն ընկալում և կարող են օգտագործել իրենց ակտիվներն ու ձգտումները՝ իրենց կյանքի վերաբերյալ իրենց որոշումները կայացնելու կամ ազդելու և իրենց նպատակները սահմանելու համար, ինչպես նաև գործելու այդ որոշումների համաձայն՝ ցանկալի արդյունքների հասնելու համար՝ առանց բռնության կամ հատուցման վախի:

- **Նպաստող միջավայր.** երիտասարդները շրջապատված են նպաստող միջավայրով, որն առավելագույնի է հասցնում նրանց ակտիվները, գործողությունների ազատությունը, ծառայությունների և հնարավորությունների հասանելիությունը և ռիսկերից խուսափելու կարողությունը՝ միաժամանակ նպաստելով նրանց սոցիալական և հուզական կարողությունների զարգացմանը:

- **Ներդրում.** երիտասարդները խրախուսվում են, ճանաչվում և կարող են ներգրավվել ու առաջնորդվել տարբեր ուղիներով՝ որպես փոփոխությունների աղբյուր իրենց և իրենց համայնքների դրական զարգացման համար:

Այսպիսով, ՈԿԳԵՆՀԳ-ի հետազոտական հարցերը նպատակ ունեին բացահայտելու այն **հիմնական ներքին և արտաքին ռեսուրսները, երիտասարդների գործողությունների ազատության դրսևորումները և ներդրումները, ինչպես նաև նպաստող միջավայրի հիմնական առանձնահատկությունները Հայաստանում,** որոնք բնութագրում են երիտասարդների ներգրավվածությունը որոշումների կայացման մեջ:

ԵԴԶ ուղենիշների շրջանակը պահպանելով՝ կիրառվել է որակական հետազոտության մեթոդոլոգիա՝ մի կողմից ԵԴԶ-ի չորս տիրույթների տեսանկյունից երիտասարդների փորձի և տեսակետների վերլուծությունն ապահովելու համար, մյուս կողմից՝ վերլուծություն այն մասին, թե ինչպես են հիմնական շահագրգիռ կողմերն ընկալում և կիրառում երիտասարդներին որոշումների կայացման մեջ ներգրավումը

Երիտասարդության բնութագրի և որոշումների կայացմանը նրանց մասնակցության մասին ամբողջական պատկերացում կազմելու համար՝ հետազոտության մեջ կիրառվել է խառը մեթոդի մոտեցումը՝ համատեղելով երկրորդային քանակական տվյալների ուսումնասիրությունը և առաջնային տվյալների հավաքագրման որակական մեթոդները: Տվյալների հավաքագրման համար օգտագործվել են հետևյալ մեթոդները.

a. Գրականության և առկա փաստաթղթերի համապարփակ ուսումնասիրություն.

> Փաստաթղթային ուսումնասիրությունն իրականացվել է պարզելու (ա) հայ երիտասարդության բնութագիրը՝ հիմնվելով ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական առանձնահատկությունների վրա, ինչպիսիք են տարիքը, սեռը, բնակության վայրը, կրթությունը, աշխատունակությունը և խոցելիության կարգավիճակը: բ) Երիտասարդների ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացներում (ԵՆՈԿԳ) պրակտիկան ԵԴԶ-ի հայեցակարգային շրջանակի տեսանկյունից: գ) քաղաքական, ինստիտուցիոնալ և ֆինանսավորման հնարավորություններ, ներառյալ որոշումների կայացման մեջ երիտասարդներին ներգրավելու համար նպաստող միջավայր ստեղծելու կառավարության հանձնառության մակարդակը: դ) Հայաստանում գործող երիտասարդական քաղաքականությունն ու պրակտիկան:

b. Հիմնական տեղեկատուի հետ և փորձագիտական կիսաստանդարտացված հարցազրույցներ.

> Քսանչորս հարցազրույցներ են անցկացվել երիտասարդական քաղաքականության իրականացման և մոնիտորինգի համար պատասխանատու հիմնական պետական գերատեսչությունների ներկայացուցիչների հետ. համալսարանների ուսանողական խորհուրդներ, Հայաստանում էթնիկ փոքրամասնություն ներկայացնող քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (ՔՀԿ), գենդերային հիմնախնդիրներով և կանանց իրավունքներով զբաղվող երկու ՔՀԿ և միջազգային զարգացման ութ գործընկերներ:

> Ինը կիսաստանդարտացված հարցազրույցներ են անցկացվել երիտասարդական երկու հատուկ խմբերի հետ՝ 44-օրյա պատերազմից վերադարձածների և ԼԳԲՏՔ+ համայնքները ներկայացնողների հետ:

c. Ֆոկուս-խմբային քննարկումներ երիտասարդական և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ.

> Անցկացվել են 22 ֆոկուս-խմբային քննարկումներ 15-29 տարեկան ավելի քան երկու հարյուր երիտասարդների մասնակցությամբ Երևանում, ինչպես նաև Սյունիքի և Արմավիրի քաղաքային և գյուղական ընտրված համայնքներում: Բացի այդ, երիտասարդների շրջանում առանձնացվել են երեք հատուկ խմբեր, որոնք ներառում են հաշմանդամություն ունեցող երիտասարդներ, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդներ և Լեռնային Ղարաբաղից տեղահանված երիտասարդներ:

> Ութ ֆոկուս-խմբային քննարկումներ են անցկացվել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների և հանրային խորհուրդների ու տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ:

> Երիտասարդների հարցերով զբաղվող ՔՀԿ-ների քսանյոթ ներկայացուցիչներ մասնակցել են վեց ֆոկուս-խմբային քննարկումների:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

Երիտասարդության սահմանումների վերաբերյալ բացահայտումները ցույց են տալիս, որ անհրաժեշտ է ավելի լայն, ավելի ամբողջական մոտեցում՝ հայկական համատեքստում երիտասարդությունը սահմանելու համար: Երիտասարդական քաղաքականության փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ **չկա երիտասարդության՝ որպես թիրախային խմբի ընդհանուր սահմանում**, և տարբեր քաղաքականություններ ընդունում են երիտասարդության իրենց սահմանումը, որը բացառապես պայմանավորված է տարիքով:

Այդուհանդերձ, շատ քաղաքականություն մշակողներ և պրակտիկայով զբաղվողներ հիմնվում են երիտասարդության ժամանակավոր սահմանման վրա, որն ընդունվել է ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2021-2025 թթ. ռազմավարության նախագծում, որը սահմանում է երիտասարդներին որպես «13-30 տարիքային միջակայքում պատանեկությունից դեպի չափահաս անցում կատարող անձինք»:

Ուսումնասիրությունը, սակայն, ցույց է տալիս, որ մասնակիցները **բազմաչափ մոտեցում են ցուցաբերում երիտասարդության սահմանմանը** և ընդունում են դրա բարդությունը, որն արտացոլվում է փորձառություններով, կարծիքներով, ծագմամբ, ինքնությամբ և համոզմունքներով, ինչպես նաև նրանց աճի և կյանքի հետագծերի բազմազանությամբ:

Հայաստանում երիտասարդ մարդիկ երիտասարդությունը սահմանում են որպես տարբեր գործոնների բաղադրիչ, ներառյալ տարիքը, տարբեր տարիքի հասունության աստիճանը, մանկությունից հասուն տարիքի անցումները և ինքնությունը: Ավելին, երիտասարդների տարբեր սոցիալական խմբեր, երիտասարդությունը սահմանելիս, առաջնահերթությունը տվել են տարբեր գործոնների: Թեև երիտասարդության սահմանումների մեջ չկան տեղանքով պայմանավորված որոշակի տարբերություններ, տարբերությունները տարբեր տարիքային խմբերի և խոցելի խմբերի կողմից առաջարկված սահմանումների միջև բավականին էական են: Այս խմբերի համար իրենց իրավունքներն իրացնելու հնարավորությունները և իրենց ինքնությունը դրսևորելու կարողությունը երիտասարդության վերաբերյալ նրանց սահմանումների կարևոր տարրերն են:

Երիտասարդների ընկալումները և կարծիքներն այն մասին, թե ինչ է ներառում երիտասարդությունը, սերտորեն կապված են **որոշումների կայացման մեջ ներգրավվածության** նրանց ըմբռնման հետ: Երիտասարդների փորձը, ծագումն ու ինքնությունը, որպես տարասեռ խումբ, ըստ երևույթին, խիստ ազդում է ԵՆՈԿԳ-ի նկատմամբ նրանց ըմբռնման և վերաբերմունքի վրա: Որոշումների կայացմանը երիտասարդների բովանդակալից մասնակցության համար հետազոտության մասնակիցները շեշտում են երեք տարր. (ա) նրանց իրավունքներն ու պարտականությունները, (բ) անկախությունը և (գ) մեծահասակների հետ փոխգործակցությունը:

Այն, թե որքանով են այդ տարրերը դրսևորվում երիտասարդների վարքագծում, հարաբերություններում և շրջապատում, կպայմանավորի նաև նրանց մասնակցության աստիճանը որոշումների կայացմանը ընտանեկան, համայնքային և պետական մակարդակներում: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, **որ երի-**

տասարդների ընկալումները ԵՆՈԿԳ-ի վերաբերյալ համահունչ են ԵԴԶ-ի ԵՆՈԿԳ-ի սահմանմանը, այսինքն՝ նրանք համարում են, որ ԵՆՈԿԳ-ը որոշումների կայացման մեջ երիտասարդների և մեծահասակների միջև ներառական, նպատակային, փոխադարձ հարգանքի վրա հիմնված գործընկերություն է:

Առկա քաղաքականության փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կառավարությունը մտադիր է ընդլայնել ԵՆՈԿԳ-ի, որպես զուտ իրազեկվածության բարձրացման գործառույթի, մակարդակը դեպի ավելի ակտիվ մասնակցություն:

Ներքին և արտաքին ռեսուրսների տիրույթում տվյալները ցույց են տալիս, որ և՛ երիտասարդները, և՛ նրանց հետ աշխատող շահագրգիռ կողմերը հայտնում են **բովանդակալից ներգրավվածության համար անհրաժեշտ կարողությունների բացակայության մասին,** ինչպիսիք են քաղաքացիական հմտությունները, հաղորդակցման, բանակցելու և շահերի պաշտպանության հմտությունները՝ չնայած ակտիվների ստեղծման բազմաթիվ երիտասարդական ծրագրերին, որոնք վերջին տարիներին իրականացվել են տարբեր ՔՀԿ-ների կողմից: ՈԿԳԵՆՀԳ-ի կողմից բացահայտված հիմնական պատճառներից մեկը **ողջամիտ հնարավորությունների և համատեքստերի բացակայությունն է, որտեղ երիտասարդները կարող են կիրառել ձեռք բերված հմտություններն** ու գիտելիքները: Երիտասարդական ռեսուրսների վերաբերյալ մեկ այլ կարևոր բացահայտում է **հարթակների, տարածքների և ուղիների մասին իրազեկվածության ցածր մակարդակը,** որոնք հնարավորություն կտան նրանց ներգրավվել որոշումների կայացման գործընթացներում, ավելի շատ՝ պետական, քան համայնքային մակարդակում:

Այս բացահայտումները կարող են ազդել ֆորմալ և ոչ ֆորմալ հաստատությունների կողմից իրականացվող **ծրագրերի արդիականության և արդյունավետության վրա՝** երիտասարդների մոտ ԵՆՈԿԳ-ին համապատասխանող կարողությունների զարգացման գործում:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ **անորոշության բարձր մակարդակը, 44-օրյա պատերազմի հետևանքով երկրում ընդհանուր անկայունությունը և դրա հետևանքով երիտասարդների՝ սեփական ապագայի վերաբերյալ զգալի անհանգստությունը, ուղղակիորեն ազդում են երիտասարդների գործունեության վրա:** Այս գործոնները հանգեցնում են երիտասարդության բոլոր խմբերի մասնակցության սահմանափակմանը, ինչը խորանում է ինչպես իրենց համայնքներում, այնպես էլ պետության ներսում վստահության մակարդակի նվազմամբ: Այնուամենայնիվ, երիտասարդների մեծամասնության ապագան ներառում է (ա) կրթությունը շարունակելը (առավել հաճախ՝ 15-24 տարիքային խմբում) և ավելի լավ աշխատանք գտնելը (ավելի մեծ տարիքային խմբում): Մեկ այլ շոշափելի միտում, թե ինչպես են երիտասարդներն ընկալում իրենց ապագան, **երկրում նրանց ապագայի վերաբերյալ իրենց դիրքորոշումների բևեռացումն է:** Մի խումբ հաստատակամ է, որ պատերազմից հետո պետք է ապրի և աշխատի Հայաստանում, որպեսզի օգնի նրա վերածննդին, մյուսը հիասթափված և հուսալքված է այն աստիճանի, որ վճռական է ամեն գնով լքել երկիրը:

Ինչ վերաբերում է երիտասարդների բարդ փոխազդեցություններին իրենց **սոցիալական համատեքստում**, որն ի վերջո ձևավորում է նրանց գործունությունը և թույլ է տալիս ձևավորել վարքագծի հատուկ օրինաչափություններ, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ **երիտասարդների կողմից ԵՆՈԿԳ-ի ընկալումների վրա ազդեցությունը հաճախ հիմնված է սեռի վրա**, հատկապես ընտանիքի և համայնքի մակարդակներում: Այսպիսով, անկախ երիտասարդների բնակության վայրից և տարիքից, **տղամարդիկ, հատկապես հայրերը, պապերը և եղբայրները հակված են ավելի վճռական դեր խաղալ**

երիտասարդների ընկալումների և որոշումների վրա՝ իրենց ընտանիքներում և համայնքներում որոշումներ կայացնելու հարցում: Այնուամենայնիվ, ընտանիքների շրջանում կա միտում՝ ավելի բաց դառնալու իրենց կրտսեր անդամներին որոշումների կայացման մեջ ներգրավելու հարցում՝ կախված ընտանեկան մշակույթից. որքան ավելի պակաս հայրապետական և հիերարխիկ է ընտանիքը, այնքան ավելի բաց է այն ԵՆՈԿԳ-ի համար: Ընտանիքում ԵՆՈԿԳ-ի վրա ազդող մեկ այլ գործոն անդամների **եկամուտների մակարդակն է:** Տվյալները ցույց են տալիս, որ ամենաբարձր եկամուտ ունեցողները հակված են ունենալ որոշումներ կայացնելու ավելի մեծ ուժ՝ անկախ տարիքից և սեռից: Վերջապես, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ **երիտասարդության գործողությունների ազատությունը որոշվում է նրանց խոցելիությամբ:** Այսպիսով, 44-օրյա պատերազմի մասնակիցներն իրենց ընտանիքներում ավելի բարձր վստահության են արժանացել մարտական գործողություններին մասնակցելուց հետո: Հաշմանդամություն ունեցող երիտասարդները հայտնել են իրենց ընտանիքների խորհրդատվական բնույթի մասին, և որ իրենց լսում են որոշումներ կայացնելիս: Այդուհանդերձ, նրանք բնորոշում են ընտանեկան խնամքի բարձր մակարդակը որպես խոչընդոտ՝ որոշակի իրավիճակներում ավելի մեծ ներգրավվածության համար, որոնք հիմնականում կապված են իրենց աշխատանքի և կրթության հետ: Ընտանեկան որոշումներից ամենաշատը տուժում են ազգային փոքրամասնությունների երիտասարդները:

Համայնքային մակարդակում երիտասարդների տրամադրվածությունը տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և աշխատակազմերի նկատմամբ, մասնավորապես՝ վստահության պակասը և խորհրդակցական երկխոսության բացակայությունը նրանց գործողությունների ազատության զգացողության վրա ազդող հիմնական գործոններն են, հատկապես ավելի մեծ տարիքի երիտասարդների խմբի շրջանում: **Վստահությունը համարվում է որպես երիտասարդների ներգրավվածության վրա ազդող վճռորոշ գործոն:** Հիասթափությունները զարգանում են երիտասարդների շրջանում, առավել հաճախ՝ 15-19 տարիքային խմբում, ընդհանրապես մեծահասակների և որոշում կայացնողների կողմից լսված և գնահատված չլինելու պատճառով: Սա հաճախ հանգեցնում է ՈԿ գործընթացներից դուրս մնալուն:

Այսպիսով, գործողությունների ազատության տիրույթում հիմնական բացահայտումն այն է, որ բարդ ճգնաժամերի ժամանակ **հայ երիտասարդությունը դեռևս պահպանում է որոշ դրական համոզմունքներ ապագայի վերաբերյալ, մասնավորապես՝ կապված նրանց անձնական աճի և զարգացման հետ, և ձեռք է բերում որոշումներ կայացնելու որոշակի ուժ իրենց ընտանիքներում, որտեղ ՈԿ-ն կարող է լինել սեռով պայմանավորված: Միևնույն ժամանակ, համայնքային և պետական մակարդակներում ներգրավվածության նրանց ակնկալիքները նվազել են՝ պայմանավորված կենսական անորոշությունների, երկարաժամկետ պլանավորման անկանխատեսելիության և այս մակարդակներում իշխանությունների նկատմամբ վստահության նվազման պատճառով:**

Ներդրումների տիրույթին վերաբերող բացահայտումները ցույց են տալիս, որ **ինքնանպատակադրումը և ինքնազարգացումը** երիտասարդների համար հիմնական դրդապատճառներն են՝ կազմակերպչական, համայնքային և պետական մակարդակներում ներդրում ունենալու համար: Հատուկ երիտասարդական խմբերի, մասնավորապես՝ ԼԳԲՏՔ+ երիտասարդների և հաշմանդամություն ունեցողների համար, **ինքնության արտահայտումը նրանց ներգրավվելու հիմնական դրդապատճառն է:** Այս խմբերում ինքնության զարգացումը և ինքնարտահայտումը մեծ դեր են խաղացել երիտասարդության և ընդհանրապես որոշումների կայացման մեջ ներգրավվածության սահմանումների մեջ:

Ինքնությունը, հատկապես ազգային ինքնության դրական արտահայտումը, հիմնական դրդապատճառն է այն համայնքներում ապրող երիտասարդների համար, որոնք ամենաշատն են տուժել Լեռնային Ղարաբաղում հակամարտության սրումից:

Երիտասարդների ներգրավվածության ամենատարածված ձևը Հայաստանում՝ կամավորությունը, երիտասարդների կողմից ընկալվում է որպես իրենց ապագան առաջ մղելու, կարիերայի հնարավորություններին օգնելու և իրենց ցանցն ընդլայնելու միջոց: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երիտասարդները կարող են հակված լինել ներգրավվելու որոշումների կայացման գործընթացներում, երբ նրանց համոզմունքները քաղաքացիական գործողությունների և հնարավոր փոփոխությունների մասին, որոնց նրանք կարող են հասնել իրենց անձնական կյանքում և իրենց համայնքներում, իմաստալից են: Հետևաբար, ճգնաժամային իրավիճակներում կամավորությունը գերակշռում է ներգրավվածության այլ ձևերի նկատմամբ, և երիտասարդներն ավելի պակաս թերահավատ են որ իրենց ձայնը կլսվի:

Հիմնական գործոնը, որը կխթաներ երիտասարդների ներդրումը որոշումների կայացման մեջ, հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների առկայությունն է, ինչպիսին է երիտասարդների հետ հաղորդակցության ստեղծումը և պահպանումը նրանց մասնակցության և դրա արդյունքների վերաբերյալ: Երիտասարդները նշում են, որ չեն ցանկանում ներգրավվել ապագա որոշումների կայացման ջանքերում, եթե բացակայեն այդպիսի մեխանիզմները:

Երիտասարդների մասնակցության մարտահրավերները ներառում են սեռը, տարիքը, ամուսնական կարգավիճակը և խոցելիությունը: Տարեց և ամուսնացած երիտասարդների ներգրավվածությունը հակված է նվազման, քանի որ նրանք ավելի շատ կենտրոնանում են աշխատանքի, եկամուտ ստեղծելու և ընտանեկան պարտականությունների վրա: Ընտանեկան պարտականություններ ունեցող 24-29 տարեկան երիտասարդ կանայք հակված են հրաժարվել ներգրավվածությունից՝ շեշտը դնելով երեխաների դաստիարակության և կրթության վրա: Եթե LBGTQ+ երիտասարդները ցանկանում են մասնակցել որոշումների կայացման գործընթացներում համայնքային և պետական մակարդակով, նրանք հակված են թաքցնել իրենց ինքնությունը: Նրանց բնակության տեսակը նույնպես համարվում է առանցքային գործոն, որն ազդում է երիտասարդների մասնակցությանը որոշումների կայացմանը: Տեղահանված երիտասարդները հաճախ չունեն բավարար տեղեկատվություն իրենց նոր համայնքներում բովանդակալից ներգրավվելու համար, իսկ հաշմանդամություն ունեցող երիտասարդները երբեմն չունեն մասնակցության մեխանիզմներ՝ հաճախ կախված հաշմանդամության տեսակից:

Ինչ վերաբերում է ներդրման ձևերին, երիտասարդները և նրանց հետ աշխատող շահագրգիռ կողմերը կարծում են, որ մասնակցության ավանդական ձևերը, ինչպիսիք են մասնակցությունը ընտրություններին և ֆորմալ քաղաքականությանը, կարևոր են, և երիտասարդները ներգրավված են ներդրման նման ձևերում: Օրինակ՝ քաղաքականության մեջ անմիջականորեն ներգրավվածությունը նշվել է որպես թավշյա հեղափոխությունից հետո երիտասարդների ներդրում ունենալու ուղիներից մեկը: Չնայած իրենց գործունեության մեջ երիտասարդների թվի նվազմանը, ՔՀԿ-ները դեռևս դիտվում են որպես երիտասարդների ներգրավման կենսունակ հարթակներ, հատկապես խոցելի երիտասարդների համար, ինչպիսիք են հաշմանդամություն ունեցող երիտասարդները և ԼԳԲՏՔ+ համայնքները: Նրանց համար ՔՀԿ-ները շարունակում են մնալ որպես կոլեկտիվ ներգրավվածության արդյունավետ ուղիներ և տարածքներ:

Այս ուսումնասիրությունը ցույց է տալիս երիտասարդների շրջանում թվային մաս-

նակցության անկում: Երիտասարդները սկսել են թերահավատորեն վերաբերվել սոցիալական մեդիայի և/կամ թվային հարթակների արժեքին և նախընտրում են օգտագործել այլ ուղիներ՝ իրենց ձայնը բարձրացնելու համայնքային խնդիրների մասին, օրինակ՝ անմիջականորեն մոտենալը պատասխանատու անձին: Էական գործոնը, որն ազդել է սոցիալական մեդիայի և ընդհանրապես թվային տարածության օգտագործման վրա, վերագրվում է 44-օրյա պատերազմից հետո լրատվամիջոցների տեղեկատվության նկատմամբ աճող անվստահությանը և, մասնավորապես, սոցիալական լրատվամիջոցների միջոցով տարածվող կեղծ լուրերին: Ավելի փոքր համայնքներում թվային մասնակցությունն ավելի հազվադեպ է, քանի որ երիտասարդները հակված են ներգրավվել անձնական ցանցերի միջոցով, և նրանք չունեն թվային հարթակներ մուտք գործելու հնարավորություն: Այնուամենայնիվ, թվային մասնակցությունն ավելի ու ավելի է գնահատվում հաշմանդամություն ունեցող երիտասարդների շրջանում:

Նպաստող միջավայրը բնութագրվում է երիտասարդներին միտված համապարփակ քաղաքականության բացակայությամբ, և սա շարունակում է մնալ հիմնական առաջնահերթությունը քաղաքականություն մշակողների համար: Թեև կառավարությունը ընտրել է իրավակարգավորող դաշտի, այլ ոչ թե քաղաքականության շրջանակի մշակման մոտեցումը, և՛ երիտասարդները, և՛ մյուս շահագրգիռ կողմերը, հատկապես քաղաքացիական հասարակությունը, կարծում են, որ քաղաքականության մշակման գործընթացի թափանցիկությունն ու ներառականությունը բավականին սահմանափակ է: Միայն շատ սահմանափակ թվով միջազգային կազմակերպություններ և ՔՀԿ-ներ են ներգրավված գործընթացում: Բացի այդ, երիտասարդության հետ կապված քաղաքականության մշակման և իրականացման համար պատասխանատու հանրային գերատեսչությունների սահմանափակ կարողությունները և քանակը, մարտահրավեր է սպասվող օրենքի կիրարկման համար: Հետազոտությունը ցույց է տալիս, որ երիտասարդների ներգրավման համար գոյություն ունեցող ինստիտուցիոնալ հարթակները, ինչպիսիք են երիտասարդական խորհուրդները և երիտասարդական կենտրոնները, համարվում են անարդյունավետ, քանի որ չունեն անկախություն և գործող մեխանիզմներ, որոնք կգործեին առանց բարձրաստիճան պետական պաշտոնյաների կողմից փոփոխությունների ենթարկվելու:

ՔՀԿ-ների նշանակալի դերը երիտասարդության կարողությունների զարգացման գործում հաստատվել է այս ուսումնասիրության մեջ: Որպես ԵՆՈԿԳ-ի ամենամեծ շահագրգիռ կողմերից մեկը՝ ՔՀԿ-ները երիտասարդներին առաջարկում են վերապատրաստում կարիերայի և աշխատանքի հետ կապված հմտությունների, բանակցային, հաղորդակցման և քննադատական մտածողության հմտությունների, ինչպես նաև ՏՏ հմտությունների և առարկայական հատուկ թեմաների, ինչպիսիք են շրջակա միջավայրը և մի քանի այլ թեմաներ: Այնուամենայնիվ, փափուկ հմտությունները համարվում են այն հմտությունները, որոնց կարիքն ամենաշատն ունեն երիտասարդները՝ ՈԿ-ի մեջ ավելի արդյունավետ ներգրավվելու համար: ՔՀԿ-ները նաև շարունակում են լինել ապահով տարածքներ երիտասարդների համար, և դա հատկապես կարևոր է սոցիալապես անապահով երիտասարդների համար, ինչպիսիք են հաշմանդամություն ունեցող երիտասարդները, ԼԳԲՏՔ+ և մասամբ երիտասարդ կանայք:

ՈԿԳԵՆՀԳ-ն ցույց է տալիս նաև, որ երիտասարդների ներգրավման պաշտոնական հարթակները, ինչպիսիք են տարբեր հասարակական և ուսանողական խորհուրդները, հանդիսանում են անվանական, այլ ոչ թե բովանդակալից ԵՆՈԿԳ, և շատ երիտասարդներ տեղյակ չեն դրանց մասին: Համայնքային երիտասարդական կենտրոնները, որոնք ստեղծվել են դոնորների և/կամ պետական

ֆինանսավորման միջոցով, պետք է լրացուցիչ գնահատվեն երիտասարդներին բարենպաստ ծառայությունների մատուցման առումով և թե ինչպես են նրանք ներգրավում երիտասարդներին իրենց առաջարկած ծառայությունների և ծրագրերի նախագծման, իրականացման և գնահատման հարցում:

Վերջապես, հայկական համատեքստում սովորաբար հանդիպող կապերը, ազգակցական և հասակակիցների շրջապատները կարևոր դեր են խաղում երիտասարդների մասնակցային վարքագիծն իրենց ընտանիքներում և համայնքներում սահմանելու գործում:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պետական քաղաքականություն մշակողներին

1. Քաղաքականության և իրավակարգավորման դաշտում որդեգրել երիտասարդության սահմանման համընդգրկուն մոտեցում, որն արտացոլում է երիտասարդության և՛ տարիքային, և՛ սոցիալական ասպեկտները և նրանց մասնակցության ձևերը:

2. Երիտասարդների և համապատասխան փորձագետների մասնակցությամբ կազմակերպել համապետական խորհրդակցություններ՝ քննարկելու թե ինչպես կարող են հաղթահարվել 44-օրյա պատերազմի և դրա հետևանքների արդյունքում երիտասարդների ապատիան և հրաժարումը քաղաքացիական և քաղաքական ներգրավվածությունից, և թե ինչ համապատասխան մեխանիզմներ կարող են ներդրվել երիտասարդական քաղաքականության և ծրագրերի մեջ:

3. Ապահովել երիտասարդների ներգրավվածությունը բնակչության բոլոր շերտերից, ներառյալ մարգինալացված և այլ կերպ խոցելի երիտասարդներին, ծրագրերի, քաղաքականության և ռեսուրսների ներդրման մշակման, իրականացման, մոնիտորինգի և գնահատման բոլոր փուլերում:

4. Ստեղծել և օգտագործել երիտասարդներին հարմարեցված հետադարձ կապի մեխանիզմներ՝ արձագանքելու երիտասարդների ներգրավվածությանը որոշումների կայացման տարբեր մակարդակներում, անկախ դրա արդյունքից:

5. Ներգրավել երիտասարդներին որպես արժեքավոր գործընկերներ՝ որոշելու լավագույն մեթոդներն ու մեխանիզմները, որոնցով նրանք լավագույնս կներգրավվեին կրթական հաստատություններում, համայնքային և պետական մակարդակներում որոշումների կայացման մեջ:

6. Իրականացնել լայնածավալ խորհրդակցություններ բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերի և երիտասարդության հետ՝ առավելապես երիտասարդության մասին նոր օրենքի և ռազմավարական փաստաթղթերի մշակման թեմայով: Այս խորհրդակցությունների արդյունքների վերաբերյալ նախատեսել հետադարձ կապի մեխանիզմներ և տեղեկացնել շահագրգիռ կողմերին դրանց կիրառման, ինչպես նաև արդյունքների և նրանց մասնակցության ազդեցության մասին:

7. Ապահովել, որ երիտասարդական քաղաքականության և ծրագրերի հետ կապված հանդիպումները, խորհրդակցությունները և միջոցառումները հարմարեցված լինեն երիտասարդների համար, օգտագործեն հստակ և մատչելի լեզու, որպեսզի նրանք հասկանան և ներգրավվեն:

8. Ապահովել պետության, զարգացման միջազգային գործընկերների, ՔՀԿ-ների և այլ համապատասխան կառույցների կողմից առաջարկվող երիտասարդական ծրագրերի և ծառայությունների արդյունավետ համակարգումը՝ երիտասարդական ոլորտում ռեսուրսների ներդրումն ավելի արդյունավետ դարձնելու համար:

9. Հավաքագրել և, անհրաժեշտության դեպքում, ստեղծել երիտասարդության հետ կապված քաղաքականության և ծրագրերի նախագծման և իրականացման տվյալների բազա և այն հասանելի դարձնել բոլոր շահագրգիռ մարմինների և անհատների համար:

10. Ընդլայնել ինստիտուցիոնալ կառույցները, որոնք պատասխանատու են երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման համար՝ հատկացնելով բավարար մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ և ապահովել պետական մարմինների կարողությունների զարգացումը:

11. Վերահսկել և գնահատել դպրոցներում քաղաքացիական կրթության, ինչպես ուսումնական, այնպես էլ արտադասարանական, ծրագրերի արդյունավետությունն ու արդիականությունը, և արդյունքները ներառել նոր կրթակարգի բարեփոխումների մշակման մեջ:

12. Վերանայել երիտասարդական կենտրոնների հայեցակարգը որպես «անվտանգ և մասնակցային տարածքներ» երիտասարդների համար՝ բացահայտելու և զարգացնելու իրենց սեփական գաղափարները և հանդիպելու որոշումներ կայացնողների հետ: Սրանք պետք է թույլ տան երիտասարդներին բացահայտ ներկայացնել իրենց գաղափարները և ինքնարտահայտվել՝ առանց խոչընդոտներ ստեղծելու երիտասարդների շրջանում:

Տեղական ինքնակառավարման մարմիններին

13. Ապահովել երիտասարդներին միտված արդյունավետ հաղորդակցման ուղիներ՝ ինչպես առցանց, այնպես էլ օֆլայն, և հանրայնացնել երիտասարդների ներգրավման ուղիները, ներառյալ այն վայրերը, որտեղ երիտասարդներն արդեն հաճախում են (դպրոցներ, համալսարաններ, երիտասարդական կենտրոններ, ՔՀԿ-ներ):

14. Զարգացնել ՏԻՄ-երի երիտասարդության հետ հաղորդակցվելու կարողությունները՝ ուսումնասիրելով թիրախային երիտասարդական խմբերի հետ շփման լավագույն ռազմավարությունները: Օգտագործել հաղորդակցման տարբեր ռազմավարություններ (ներառյալ ֆիզիկական, թվային, դպրոցական և այլընտրանքային համայնքային տարածքներ) տարբեր տարիքի երիտասարդների և սոցիալական խմբերի համար՝ հաշվի առնելով, թե որն է լավագույնը յուրաքանչյուր խմբի համար: Ընդունել օգտագործողի համար առավել հարմար լեզվի և հաղորդակցման ռազմավարություններ, որոնք հնարավորություն կտան երիտասարդներին ավելի հաճախ ներգրավվել համայնքի հետ կապված խնդիրների շուրջ:

15. Իրականացնել և պահպանել երիտասարդական կազմակերպությունների և այլ ոչ պաշտոնական նախաձեռնությունների քարտեզագրում՝ բարելավելու երիտասարդների ներգրավման գործողությունների համակարգումը՝ չբացառելով տարբեր երիտասարդական խմբերը:

16. Ապահովել երիտասարդության տարբեր խմբերի ներգրավվածությունը համայնքային ծրագրերի և միջոցառումների պլանավորման, իրականացման և մոնիտորինգի մեջ, ինչպիսիք են համայնքի զարգացման հնգամյա ծրագրերը:

17. Համոզվել, որ երիտասարդների ներգրավվածությունը ներառում է ընտանիքից սկսած մինչև քաղաքականություն եղած բոլոր մակարդակները և այդ հաստատել կապեր այդ մակարդակների միջև:

18. Տարածաշրջանային և համայնքային պաշտոնական տարածքներից դուրս երիտասարդների համար ապահովել հանդիպումների անվտանգ և հարմար տարածքներ և նրանց հետ ներգրավվել բաց երկխոսության ու մտքերի փոխանակության մեջ:

ՔՀԿ-ներին

19. Գնահատել երիտասարդների կարողությունների զարգացման ծրագրերի արդյունավետությունն ու համապատասխանությունը, որպեսզի դրանք երիտասարդներին օգնեն ընկալել տեխնիկական բովանդակությունը, սոցիալ-քաղաքական համատեքստը և շահագրգիռ կողմերին՝ որոնց հետ նրանք համագործակցում են: Ապահովել սովորելու և պրակտիկայի հնարավորություններ, որտեղ երիտասարդները կարող են կիրառել իրենց ձեռք բերած կարողությունները:

20. Ծրագրային գործողություններում նպատակ դնել թիրախավորելու երիտասարդության ավելի լայն շերտերին, ներառյալ «չկազմակերպված երիտասարդներին», այսինքն՝ այն երիտասարդներին, ովքեր չեն ներկայացնում որևէ կազմակերպություն, ինչպես նաև ավելի քիչ հնարավորություններ ունեցող երիտասարդներին: Սա թույլ կտա խուսափել երիտասարդների միևնույն խմբի հետ աշխատելու անարդյունավետ մոտեցման կաղապարից:

21. Ապահովել, որ երիտասարդներին ուղղված ծրագրային գործողությունները հավասարապես թիրախավորեն նրանց աշխատանքն իրենց ընտանիքների և համայնքների հետ:

22. Նպաստել համայնքների և/կամ կառավարության և երիտասարդական խմբերի միջև համագործակցության զարգացմանը, որպեսզի երիտասարդները կարողանան ներգրավվել համայնքային աշխատանքում և ունենան կամավորություն անելու հնարավորություններ:

23. Գործընկերություն հաստատել երիտասարդական կազմակերպությունների և տեղական ու պետական իշխանությունների միջև՝ երիտասարդների համար մենթորության ծրագրերը խթանելու համար:

«Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագիր

Ծրագիրը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ ՄԶԳ միջոցով: